112 – 124



ԹԱՐՍԵՂ Գ. ԽՍԳԷՋԷՐԵԱՆ

# ՀԱՒԱԶԱՆՔ

1912

Տպարան "ՇԱՆԹ",

Ղալաթիա

891.99-1

ԲԱՐՍԵՂ Վ. ԻՍՎԷՋԷՐԵԱՆ

# ՀԱՌԱՋԱՆՔ



1912

Տպարան "ՇԱՆԹ",

Գալաթիա

3841

(67 22.54)

ԱԶԳԱՅԻՆ

116-2015
կ116

# ՀԱՌԱՉԱՆՔ

## ԹՇՈՒԱՌԸ

Արեգի շողէն ժըպիտ ցանուեցաւ,
Ես այդ ժըպիտով սիրտըս տաքցուցի·
Ամպոց կուտակէն շիթեր մաղուեցաւ,
Ես այդ շիթերէն բաժակ մ'ըմպեցի ։

Մանուկ էի դեռ, Արեւն երբ գոցուէր,
Ծընչէս, սեւ ամպերն, ո՛հ կը հալէին։
Անցան տարիներ, երբ Արեւ ծագեր,
Ամպի կը փոխուէր շիթերուս շողին ։

## ԱՆՈՒՇ ԹՈՒՆԱՒՈՐՈՒՄ

Կո՛յս, աչքերուդ մէջ, արդեօք ի՞նչ ունիս,
Մերթ կրակ ու բոց ցանես հոս ու հո՛ն.
Վարդ շրթներուդ տակ, բան մ'ունիս, սրտիս
Յանձնելու համար՝ իբր սրտիդ ձօն։

Նայուածքիս աղու՝ թեւ տամ շատ անգամ,
Նայուածքիդ միայն գիրկը կը լեցուի.
Սրտիդ արձագանգը սրտիս մէջ կ'զգամ,
Երբ ժըպիտըդ ալ ժըպտիս հետ մարի։

Կո՛յս, կուրծքիդ տակը, դեռ ինչե՛ր ունիս,
Խօսէ ինձ մեղմիւ, սիրտ թէ ուրիշ բան.
Ո՛հ շունչըդ անուշ՝ վեր վար ցընցէ զիս,
Կո՛յս, լեզուիդ տակը, ինչե՛ր, ինչե՛ր կան։

## ԿՈՅՍԸ

Սրտիս, հոգիիս, նայուածքիս դիւթող
Նեկտարով կ'ուզեմ թունաւորել քեզ.
Ես վըտակ մ'եղայ առջեւէդ հոսող,
Որ սիրոյ Նեկտարն դու միակ ըմպես։



## ՀՐԱԺԵՇՏԻ Մ°ԱՌԹԻՆ

Իմ դառն արցունքըս ժայռին թափեցի,
Ժայռը փըշրելով. փոխուեցաւ աղի.

Երբ վարդենիի վրան սրսկեցի.
Սոխակին երգը փոխուեցաւ լացի.

Ապա սերմին տեղ հողին ցանեցի.
Փըշալից համբէն անցայ բոկանի։

## ԱՐԵԱՆ ԾՈՎԱԿ

Եթէ սիրտըս սուրով հերքես,
Հոգեա՛կ, ես չ'եմ սրտմտիր քե՛զ,
Իմ արիւնէս, կարմիր այնքա՛ն,
Հոգ չէ ծովեր թող ձեւանան։

Աչքերուս մէջ գամ մ'իսկ գամես,
Չեմ արգիլեր, սիրելի՛ս, քեզ.
Արիւն շիթես ծովակ լինի,
Հո՛ն, մակոյկըդ թող տատանի։

## ՅՈՒՍԱՀԱՏԸ

Արցունքս, գետին ինկաւ, շոգիացաւ,
Շոգին, օդէն վեր բարձրացաւ,
Հառաչիս ռումբերն օդոյ մէջ պայթեցաւ,
Մուխն ալ, շոգւոյն պլլուեցաւ:

## ՏԵՆՉԱՆՔ

Սեւ զանգուրներէդ պատեան մը հիւսեմ,
Ճակտիդ բիւրեղեայ դափնի մը վըսեմ,
Քե՛զ, ա՛յդ պատեանին մէջ տեսնել կ'ուզեմ:

Եւ, երբ կ'ուզես, վանդակ մը հիւսեմ,
Ձեռքիդ բիւրեղեայ կիթառ մը դընեմ,
Քե՛զ, այդ վանդակին մէջը զետեղեմ:

Երբ դափնիդ հալի, մարմինըդ բրջէ,
Աչքերդ կայծեր դուրս հանէ, հոգ չէ,
Յուզեալ երգերով, պատեանըդ ճեղքէ:



Թող ձեռքիդ կիթառն երգերէդ հալի,
Վանդակդ ալ, ձայնէդ փըշրի, խորտակի,
Ու դո՛ւն, սիրելի՛ս, մօտ եկո՛ւր ինծի:

## ՓՈԹՈՐԻԿԷՆ ԱԶԱՏ

Վերջալոյսն հասաւ վարդի պէս լռիկ,
Կապոյտն ալ հագաւ կապարէ լօղիկ.
Տըխուր էի ես, ա՛ն եկաւ, սրտիս
Մէջը խոյացաւ՝ ըափոփելու զի՛ս:

Երկունք մ'էր հոգւոյս խռովքն յանժամ,
Փրփրեցաւ արիւնս ալեաց պէս դաժան.
Պիտի խեղդուէր ա՛ն, իմ փրփուրներէս,
Սիրտըս նաւակի վերածեցի ես:

## ԱՉԱԶՈՒՐԿԸ

Կաթիլ կաթիլ արտասուքէ շուրջըս լճակ ձեւացաւ,
Այն դառնութեան կեդրոնին մէջ կղզի մ'եղայ ես անձայն,
Որտիս բոցը, այդ լճակին խռովեցաւ դուրս չ'ելաւ,
Ջուրերու եւ բոցերու մէջ՝ պատնէշ մ'էի ես անձայն։

---

## ՊԱՆԴՈՒԽՏԻ ՁԱՅՆԸ

Միայնութեան խորը նետուած արարած մ'եմ, ես հիմա,
Ծընողական գուրգուրանքէ զրկուած մ'եմ ես հիմա
Օտար երկրի հովերուն մէջ կը տատանիմ ես հիմա՛,
Հայրենիքիս զեփիւռներուն կարօտ քաշեմ ես հիմա՛,
Երկնակամարն, անհո՛ւն, պայծառ, մութ կը տեսնեմ ես հիմա,
Թարթիչներէս կախուած արցունք կը նշմարեմ՝ ես հիմա՛։
Վարդետունկէն վարդ քաղելու երբ երթամ ես հիմա՛,
Վարդի տեղը սեւ սեւ փուշեր կը փըրցունեմ ես հիմա :
Եւ յուսահատ, կ'ուզեմ թաղուիլ ցուրտ շիրմի տակ ես հիմա՛
Հայրենիքիս սեւ հողերը կը փընտռեմ ես հիմա։

---



## ԱՆԴԱՄԱԼՈՅԾԸ

Նայուածքիդ բեռով հոգիս ընկճեցիր,
Սիրտըս ա՛յդ բեռին եղաւ մի կըշիռ,
Ժըպիտ ցանեցիր կըշիռիս վրան,
Գամուեցայ ես հո՛ն, քայլերըս կուրցան։

---

## ԱՆԲԱՂԴԸ

Իմ շիթերն աղի ցուրտէն սառեցան,
Համրիչ շինեցի սառ կաթիլներով,
Բաղդ որոնեցի դառն համրիչով,
Ի զուր դառնացայ համրիչիս նըման։

---

## ՅՈՒԶՄՈՒՆՔՍ

Նայուածքըդ գընաց անկիւն մը ինկաւ,
Ես այդ անկիւնէն սիրտ մը քաղեցի․
Սիրտը սըրտիս հետ երբ բաղդատեցի,
Դառըն յուզմանց մէջ գինովցայ անձկաւ։

Նայուածքիդ սուրըն, որ մ'ալ սիկառիս
Մուխը նեղքեյով՝ երբ շիկնեցուց զիս,
Մահամերձի պէս սիրտըս դառնացաւ.
Մուխը քաղցրացաւ, գինովցայ անձկաւ։

Նայուածքըդ ինկաւ՝ ջութակիս վրան,
Թելերու շեշտերն դողալ ըսկըսան,
Ձայնիդ արձագանգն ալ երբոր իմ սրտին
Մէջէն կ'երերար՝ գինովցայ կրկին։

## ԿԱՅԾԵՐՈՒ ՏԱԿ

Հագիւ իր ժպտուն դէմքը տեսայ ես,
Սրտիս հին ցաւերն ինձ քրտինք դարձան.
Անձայն ու անհոգ, հրեշտակի պէս
Կայնած էր դէմըս, մազերով գիր ցան։

Իր նայուածքին մէջ, այնքա՜ն զօրաւոր,
Անոր նայուածքին սարսուռն ըզգացի,
Ու երբ թաղուեցայ իր աչքերուն խոր,
Հողի տեղ կայծեր թափուեցաւ վրաս։



## ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Եւ երկնակամարն *աչքն* է *աշխարհի*.
*Յուզմունքն*, ամպերն են, ամպեր ձիւնալի.
Մերթ կ'անձրեւէ *արցունքի* փոխան,
*Ըմփոփանքըն* ալ համակ ծիածան։

## ԶԶՈՒԱՆՔ

Ի՞նչ ունէր արդեօ՞ք իր դիմաց վրան,
Անոր նայելէ չէի յագենար.
Մի՜շտ կը տրոփէր. սիրտըս սիրավառ,
Ի՞նչ ունէր արդեօք իր դիմաց վրան։

Նայուածքէն անուշ՝ երբ կը զրկէր զիս,
Սրտանց կ'ատէի կեանքըն այն պահուն.
Վէրքեր կը բանար սրտիս խորերուն,
Նայուածքէն անուշ երբ կը զրկէր զիս։

Կեանքը չունէր բոյր, երբէ՛ք ինձ համար
Առանց իր ժպտին, զոնէ մէկ րոպէ,
Չէր խղճար վրաս, երբ կ'ըսէի թէ
Կեանքը չունէր բոյր, երբէ՛ք ինձ համար։

★

Տարիներ անցան, մոռցած էի զինք,
Օր մը մութ ատեն ինծի հանդիպեցաւ,
Ժըպտելով գոչեց, վանէ՛ սըրտիդ ցաւ,
Դժուարաւ ճանչցայ, մոռցած էի զինք։

Ըսաւ, մօ՛տ եկո՛ւր, ո՛վ իմ սիրական,
Ապա գգուեց զիս։ Ըսի, անե, ե՛ս,
Չեմ ճանչնար ես քե՛զ, դո՛ւն անծանօթ մ'ես։
Ըսաւ, մօ՛տ եկուր, ո՛վ իմ սիրական։

Երբ դէմքը տեսայ ըզգացի նողկանք,
Ուխտեցի մոռնալ զինքըն յաւիտեան,
Ա՛ն, որ ինծի տուաւ ցաւեր անդարման,
Երբ դէմքը տեսայ ըզգացի նողկանք։

Թո՛ղ տուր, պոռացի, ա՛լ չեմ սիրեր քեզ,
Իր դիմաց վրայ կային խոռոչներ,
Անգութ ծաղկախտը զայն հարուածեր էր,
Թո՛ղ տուր, պոռացի, ա՛լ չեմ սիրեր քեզ։



## ՍՓՈՓԱՆՔ

Առ Մայրն իմ

Քեզ մոռնալու համար սիրտս քար ըրած,
Ա՛լ հեռի կ'ապրիմ հայրենի տունէս.
Ի զուր տեղ լալուն մօ՛րս դառնապէս,
Դուն եղար պատճառ, դիւթի՛չ արարած։

Երբ դեռ հո՛ն էի, նայուածքիդ սիրուն,
Ինչպէս դիւթեցին զիս, ո՛հ, չեմ գիտեր,
Սրսկէիր չորս դիս կայծեր որդաւեր,
Քե՛զ կ'երազէի, ա՛ղջիկ, օրն ի բուն։

Շաբաթներ անցան երազիս մէջ այլ
Օր մ'ինծի երեւցար պարտէզի մը մէջ,
Հազիւ ցոյց տուի քե՛զ սրտիս էլ-էջ,
Ըսիր, այն սիրոյն կ'ուզեմ ես վերջ տալ։

Յայնժամ մէկն անդէն գոչեց մեղմաձայն,
—«Մի՛ այդքան տխրիր, սիրասուն որդեակ,
Հանգչեցուր սիրտըդ իմ թեւերուս տակ։»
Ես ձայնէն ճանչցայ, մայրիկըս էր ա՛ն։

★

Այն օրէն ի վեր միշտ մէջ երազիս
Դուն կ'ըլլաս, մա՛յրիկ, ինծի մըխիթար․
Լոկ սէրդ է անկեղծ․ *Սուտ է այս աշխարհ*
Քու սիրոյդ միայն կը յանձնեմ հոգիս։

---

## ԿԵԱՆՔԸ

---

Կեանքըն ինձ համար ուղի մ'է փոշոտ,
Ի զուր կ'որոնեմ հետքը մարգերուն,
Մէն մի քայլերուս, ափսո՛ս, հոս ու հո՛տ,
Նորանոր փուշեր տեսնեմ սեւագոյն։

Ի զուր կ'որոնեմ հետքը մարգերուն,
Ոչ ալ ծաղկի մը ո՛հ բուրումնաւէտ․
Անհամար ցաւեր սրտիս մէջ թաքուն,
Կեանքիս թելերը կը կրծեն յաւէտ։

Մէն մի քայլերուս, ափսո՛ս, հոս ու հոտ,
Կուրծքէս հառաչներ դուրս պոռթկան ընդ միշտ․
Կը բաղձամ մեռնիլ իբրեւ հեզ անցորդ,
Որ միակ մահուամբ կը մոռնայ իր վիշտ։

Նորանոր փուշեր տեսնեմ սեւագոյն,
Ո՛ւր որ ոտք կոխեմ, ի՛նչ դառըն վիճակ...



Սիրտըս ցաւերու եղաւ մի մեծ բոյն,
Մա՛հ, քե՛զ կ'սպասեմ, բա՛ց ինձ քու լանջակ։

Կեանքըն ինձ համար ուղի մ'է փոշոտ,
Ի զուր կ'որոնեմ հետքը մարգերուն,
Մէ՛ն մի քայլերուս, ափսո՛ս, հո՛ս ու հո՛տ,
Նորանոր փուշեր տեսնեմ սեւագոյն։

# ՑԱՆԿ


| | էջ |
|---|---|
| Թշուառը | 3 |
| Անուշ Թունաւորում | 4 |
| Կոյսը | 4 |
| Հրաժեշտի Մ'առփիւ | 5 |
| Արեան Ծոլակ | 5 |
| Յուսահատը | 6 |
| Տենչանք | 6 |
| Փոթորիկէն ազատ | 7 |
| Աչազուրկը | 8 |
| Պանդուխտի Ձայնը | 8 |
| Անդամալոյծը | 9 |
| Անբաղդը | 9 |
| Յուզմունք | 9 |
| Կայծերու Տակ | 10 |
| Նմանութիւն մը | 11 |
| Զզուանք | 11 |
| Սփոփանք | 13 |
| Կեանքը | 14 |

ԳԻՆ 40 ՓԱՐԱ

ՀՀ Ազգային գրադարան
NL0336236

ՀՀ Ազգային գրադարան
NL0336235

ՀՀ Ազգային գրադարան
NL0336234

ՀՀ Ազգային գրադարան
NL0336233

ՀՀ Ազգային գրադարան
NL0336232

ՀՀ Ազգային գրադարան
NL0336231

ՀՀ Ազգային գրադարան
NL0652294

NL0336230

ՀՀ Ազգային գրադարան
NL0336229

ՀՀ Ազգային գրադարան
NL0336228

ՀՀ Ազգային գրադարան
NL0336227

ՀՀ Ազգային գրադարան
NL0336226

ՀՀ Ազգային գրադարան
NL0336225